ՏԵՂԵԿԱԳԻՐ ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР

Հասարակական գիտություններ 1948, № 11 *Общественные науки*

Ս. Դ.ազարյան

ՄԻ ԷՋ «ՀՅՈՒՍԻՍԱՓԱՅԼԻ» ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ

Ստեփանոս Նազարյանը հայերեն ամսաթերթ հրատարակելու ցանկություն վաղուց է ունեցել։ Դեռևս Կազանի համալսարանում պաշտոնավարելու ժամանակ նա ամսաթերթ հրատարակելու համար հսկայական ջանք է թափել և աշխատել է ինչ գնով էլ լինի հրատարակել հայերեն ամսաթերթ, որը իր կարծիքով խոշոր նշանակություն կարող էր ունենալ հայ ժողովրդի զարգացման համար։ Ամսաթերթ հրատարակելու իր մտադրությունը իրագործելու համար նա դիմում է ցարական կառավարական օրգաններին և խնդրում է իրեն թույլ տալ հրատարակելու հայերեն ամսաթերթ. 1844 թվի նոյեմբերի 2-ին Կազանի ուսումնական օկրուգի հոգաբարձուին ուղարկած իր դիմումի մեջ գրում է, թե Կազանի համալսարանում հայոց լեզվի բաժինը բաց անելու հիմնական նպատակներից մեկը իհարկե հայկական հին հիշատակարանների ուսումնասիրությունն է, բայց դրա հետ միասին, այդ ձեռնարկման խնդիրն է՝ օժանդակել հայ ժամանակակից սերնդի մտավոր զարգացմանը։ Այդ պատվարժան նպատակի իրագործումը, նրա կարծիքով հնարավոր էր միայն Ռուսաստանում, որը «հոգևոր միջնորդ է երկու հակադիր աշխարհների՝ արևմուտքի և արևելքի միջև»։[1]

Նազարյանը նախատեսնում էր այդ ամսաթերթը հրատարակել հայ ժողովրդին հասկանալի և մաքուր լեզվով։

Կազանի ուսումնական օկրուգի հոգաբարձուն Նազարյանի դիմումը և ամսաթերթի կոնսպեկտը 1845 թ. փետրվարի 2-ի № 703 գրությամբ ուղարկում է ժողովրդական լուսավորության մինիստրությանը և խնդրում է թույլ տալ Նազարյանին՝ հրատարակելու հայերեն ամսաթերթ։

Հրատարակվելիք ամսաթերթի կոնսպեկտի մեջ Նազարյանը հանգամանորեն շարադրում է իր տեսակետները այդ ձեռնարկության մասին. հայ ժողովրդի մեջ օգտավետ գիտելիքներ բոլորին հասկանալի լեզվով տարածելու համար նշանակված ամսաթերթի անհրաժեշտությունը, ասում է նա իր կոնսպեկտում. հասկանալի է բոլոր նրանց, ովքեր ընդունակ են դատել հայ ժողովրդի կարիքների մասին ներկա ժամանակաշրջանում։ Եվրոպայի կյանքն ու գործունեությունը գիտության և արվեստի ասպարեզում, համարյա թե անհայտ է մնում հայ ժողովրդին. ճիշտ է, շարունակում է նա, լույս է տեսնում երկու ամսաթերթ արևմտյան հայերեն բարբառով, ինչպես նաև Մխիթարյանները հրատարակում են ամսաթերթեր և գրքեր, բայց այդ բոլորը մեծ մասամբ գրված են գրաբար և հասկանալի չեն հայ ժողովրդի հոծ զանգվածներին. այդ իսկ պատճառով չեն կարող լուրջ ծա-

[1] Центральный Государственный Исторический архив в Ленинграде. ф. 772, оп. 4, Ед. Хр. № 148947, лист 2.

ությունն ժատուցել հայ ժողովրդին։ Այդ փաստերը նկատի ունենալով կարելի է ասել, որ հայ ժողովուրդը դեռևս չունի հանրամատչելի մի ամսաթերթ, որը ընդունակ լիներ փոխանակել աշխարհի բոլոր ծայրամասերում ցվրված հայ ժողովրդի զավակների ժտքերը, համախմբեր և խրախուսեր նրանց՝ աշխատելու ժողովրդի զարդացման համար։[1]

Նազարյանը ժամանակի հայության հետամնացության և կրթության նկատմամբ ցուցաբերված անտարբեր վերաբերմունքի պատճառներից մեկը համարում է ժողովրդին հասկանալի գրքերի և ամսաթերթերի բացակայությունը։

Հայ ժողովրդին մասավորապես բարձրացնելու, նրան հայրենի պատմության, գրականության և կուլտուրական այլ արժեքների հետ ծանոթացնելու համար նա անհրաժեշտ էր համարում հրատարակել՝

ա) Հատվածներ հայրենի գրականությունից, աշխարհագրությունից, պատմությունից և ներկա ժամանակի նվաճումները.

բ) Հետաքրքիր հոդվածներ ընդհանուր պատմության, հողագրության (землеописание), վիճակագրության, բնագիտության, գյուղատնտեսության և առևտրական գիտության մասին.

3) Քաղաքական հակիրճ տեղեկություններ։[2]

Այնուհետև Նազարյանը շարադրում է ամսաթերթի բաժանորդագրության պայմանները և ծավալը, որ նախատեսնում է ամիսը երկու տպագրական մամուլի չափով։

Ժողովրդական լուսավորության մինիստրությունը 1845 թ. մարտի 28-ի № 618 գրությամբ հայտնում է Կազանի համալսարանի ռեկտորին, թե հայերեն լեզվով ամսաթերթ հրատարակելու հարցը քննության է առնվել դրաքննության գլխավոր վարչության կողմից և նկատի ունենալով որ այդ լեզուն տիրապետող դրաքննիչ առայժմ չկա, հանձնարարում է հետաձգել այդ ամսաթերթի հրատարակությունը մինչև նպատակահարմար պայմանների ստեղծումը։

Այսպիսով, Ս. Նազարյանի առաջին ձեռնարկությունը հաջողությամբ չի պսակվում։ Սակայն նա այդ մտքից վերջնականապես չի հրաժարվում և 1856 թ. նորից է դիմում լուսավորության մինիստրությանը՝ իրեն թույլատրելու հայերեն լեզվով ամսաթերթ հրատարակելու։ Այդ մասին լուսավորության մինիստրության գրասենյակը 1856 թ. հուլիսի 19-ի №1050 գրությամբ հայտնում է Լազարյան ինստիտուտի գլխավոր վարիչ գրաֆ Ալեքսանդր Ֆեոդորովիչ Օրլովին գրաքննիչ նշանակելու և Նազարյանի ու այդ նախաձեռնության մասին իր կարծիքը հայտնելու։ Լազարյան ինստիտուտի գլխավոր վարիչը (главноначальствующий) նույն թվի հուլիսի 29-ին №1206 գրությամբ պատասխանում է, որ

ա) Լազարյան ինստիտուտի պրոֆեսոր Ս. Նազարյանը իր ընդունակություններով ու ժտածելտկերպով արժանի է վստահության.

բ) Ամսաթերթ հրատարակելու նրա ցանկությունը պետք է խրախուսել և թույլ տալ նրան սկսել այդ գործը պայմանով, որ նախօրոք այդ ամսաթերթի հրատարակության մասին ստացվի նաև Կազանի համալսարանի թույլտվությունը, որովհետև այդ ամսաթերթը պետք է սպասարկի

[1] ЦГИАЛ, ф. 772, оп. 4, Ед. Хр. № 148917, лист 3.
[2] Նույն տեղում, թերթ 5։

նաև այդտեղ. ինչպես նաև Անդրկովկասի զանազան ուսումնական հիմարկներում սովորողներին.

գ) Գրաքննիչ նշանակելու առաջարկության հետ ես համաձայնում է ինստիտուտի ղեկավարը, բայց նպատակահարմար է համարում այդ գործը հանձնարարել Ս. Պետերբուրգի գրաքննության կոմիտեին, որովհետև այնտեղ ավելի հեշտությամբ հնարավոր է գտնել հայերենին տիրապետող գրաքննիչ։

Ս. Նազարյանին 1857 թ. թույլատրվում է հրատարակելու հայերեն ամսաթերթ։ Այդ մասին լուսավորության մինիստրությունը Ս. Պետերբուրգի ուսումնական օկրուգի հոգաբարձուին 1857 թ. մարտի 21-ի № 546 գրությամբ հայտնում է, որ կայսրը 1857 թ. մարտի 17-ին, այդ առթիվ ներկայացված դիմումի վրա իր սեփական ձեռքով մակագրել է՝ «Համաձայն եմ, եթե այն ուսուցիչը, որին հանձնարարվելու է գրաքննությունը, իր անձնավորությամբ արժանի է պետության վստահության»։ Մինիստրությունը այդ նույն գրությամբ խնդրում է հայտնել, թե կարելի՞ է գրաքննության պարտականությունը գնել Ս. Պետերբուրգի հավալսարանի ադյունկտ Բերոևի վրա։ Ս. Պետերբուրգի գրաքննության կոմիտեն 1857 թ. մարտի 29-ի գրությամբ տեղեկացնում է լուսավորության մինիստրությանը, որ չի առարկում այդ գործը Բերոևին հանձնելու դեմ։ 1857 թ. ապրիլի 5-ին մինիստրությունը պահանջում է հայտնել Բերոևին այդ մասին և կարգագրել նրան սկսել աշխատանքը։

Այդ գրության հետ ուղարկում է նաև «Հյուսիսափայլի» ծրագիրը, որով հայտնվում է, որ այդ պարբերական հրատարակությունը ունենալու է մի շարք բաժիններ և տպագրելու է.

ա) Ընդհանուր պատմության վերաբերող հոդվածներ.

բ) Ինագիտության հարցերի պարզաբանմանը վերաբերող հոդվածներ.

գ) Բարոյա-էսթետիկական հոդվածներ։[1]

Նազարյանի ամսաթերթը, որ արդեն նախատեսվում է։ 8—10 տպագրական մամուլի ծավալով, ինչպես երևում է նրա ծրագրից, ընդգրկելու էր բազմաթիվ հրատապ հարցեր, որոնք զբաղեցնում էին ժամանակի դիտական շրջաններին և մեծ չափով վերաբերում էին նաև հայկական կյանքին։ Այդ սկզբունքին հավատարիմ մնաց Նազարյանը և իր ամսաթերթը դարձրեց այն հաստատուն զինապահոցը, որի միջոցով հայ մտավորականությունը հաղորդակից էր դառնում Ռուսաստանում լայնորեն իր արմատները ընդարձակող առաջավոր գաղափարախոսությանը և տարածում էր դրանք հայ ժողովրդի մեջ։

Չնայած Ս. Նազարյանի բուռն ձգտումներին և ջանքերին, նա 1857 թվին չի կարողանում հրատարակել իր ամսաթերթը, որովհետև նրան խանգարում են բազմաթիվ խոչընդոտներ։ Բավական է ասել, որ միայն գրաքննիչի աշխատավարձ նշանակելու հարցը մի քանի ամիս է տևում և դարձյալ վերջնականապես չի վճռվում. «Հյուսիսափայլի» գրաքննիչ Բերոևը միայն 1858 թվին միանվագ ստանում է 1000 ռուբլի և ապա նրա աշխատավարձի հարցը անուշադրության է մատնվում այնքան, որ նա ստիպված

[1] ЦГИАЛ, ф. 777, опись 2, Ед. Хр. 71., лист 5—6 (տես հավելված)։

1859 թվին բողոքում է մինիստրությանը սահմանված աշխատավարձը չստանալու համար։

Սակայն այդ դժվարությունները շատ քիչ էին անդրադառնում Նազարյանի աշխատանքների վրա, նա այլ ավելի ուժեղ դժվարությունների էր դեմ առնում նրա ամսաթերթի առաջին իսկ համարը լույս տեսնելուց հետո հայկական մտավորականության մեջ սկիզբ են առնում թեր ու դեմ կարծիքներ, որոնք դնալով ավելի ու ավելի բորբոքվում են ու սպառնում են «Հյուսիսափայլի» դոյությանը։ Ամսաթերթի դեմ սկսված պայքարը գլխավորում էր հոգևորականությունը, որը իր բոլոր մեքենայությունները և միջոցները գործի էր գնում Նազարյանին խանգարելու համար։ Հատկանշական է այն հանգամանքը, որ Իսպարարիայի և Ն. Նախիջևանի արքեպիսկոպոս Գ. Այվազյանը, երբ ստանում է «Հյուսիսափայլի» առաջին տետրակները, ողջունում է Նազարյանին իր 1858 թ. հունիսի 29-ի նամակով և նույն ժամանակամիջոցում գազտնի կարգով բողոքում է այդ ամսաթերթի դեմ, որի մեջ, ինչպես գրել է նա՝ տպվում էին այնպիսի հոդվածներ, որոնք ուղղված էին հայ-լուսավորչական եկեղեցու և հոգևորականության բարձր ներկայացուցիչների դեմ։ Այվազյանը չի կարողացել հանդուրժել Նալբանդյանին և առանձնապես ընդգծել է նրա հոդվածների վտանգավորությունը։ Բեռ ավելին. նա պահանջել է փակել այդ ամսաթերթը, որն իբրև թե ունի անբարոյական ուղղություն և օրենքի ամենայն խստությամբ պատժել Նալբանդյանին որպես մեղապարտի և մտքեր պղտորողի։

Ներքին գործերի մինիստրության երկրորդ բաժնի 1859 թվի հունվարի 28-ի N 190 գրության մեջ այդ առթիվ գրված է, թե հոգևորականության և աշխարհիկ մի քանի անձնավորությունների դեմ հոդվածներ նրանում (ամսաթերթում. Ս. Ղ.) հանգես են եկել սկզբում անոնիմ, իսկ հետո Նալբանդյանցի ստորագրությամբ. այդ հոդվածներում հեղինակը, թեև ոչ ուղղակիորեն, բայց միանգամայն հասկանալի արտահայտություններով ամենաանվայել ձևով սևացրել է հանգուցյալ կաթողիկոս Ներսեսին, այժմյան Թիֆլիսի թեմի պետին, արքեպիսկոպոս Այվազյանին, Լազարյան ինստիտուտի մի քանի պրոֆեսորների ու շատ ուրիշների և արտահայտել է այնպիսի մտքեր ու հասկացողություններ, որոնք կրոնի ոգուն և խիստ բարոյականության սկզբունքներին ընդդեմ են։

Այդ պատճառով արքեպիսկոպոս Այվազյանը միջնորդել է այդ ամսաթերթի արգելման մասին և պահանջել է նամակի հեղինակին՝ Նալբանդյանին որպես հանցապարտի, իր կրոնակիցների մեջ անհամաձայնություն սերմանելու մտադրություն հրահրելու և հոգևորական և աշխարհիկ այնքան պատվավոր անձնավորություններին անձնապես վիրավորելու համար ենթարկել արժանի պատժի՝ օրենքի ամբողջ խստությամբ։[1]

Այվազյանի բողոքները «Հյուսիսափայլը» փակելու բավականաչափ հիմք չտալով հանդերձ, այնուամենայնիվ անհետևանք չի անցնում. լուսավորության մինիստրությունը գրաքննության կոմիտեին ուղղած իր 1859 թվի հուլիսի 17-ի գրությամբ հայտնում է, որ գրաքննիչ Իերոևը խախտել է գրաքննության կանոնագրությունը և թույլ է տվել ամսաթերթում

[1] ЦГИАЛ, ф. 777, оп. 2, Ед. Хр. 34, стр. 2—3.

տպագրելու այսպիսի հոդված, որը չպետք է նույնությամբ լույս տեսներ։ Այդ գրությամբ կարգադրվում է զգուշացնել Բերոևին այդպիսի զանցանքներ հետագայում թույլ չտալու։

Սակայն միայն Այվազյանին չէր, որ անհանգստացնում էր «Հյուսիսափայլը»։ Էջմիածնի միաբանությունը նույնպես շահագրգռված էր այդ ամսաթերթի ազդեցությունը թուլացնելու գործով և օգնության ձեռք էր մեկնում բոլոր նրանց, ովքեր վատ էին տրամադրված այդ հանդեսի դեմ։ Էջմիածնի հոգևորականները նույնպես սարսափում էին ամսաթերթի սուր ելույթներից և ամեն կերպ ձգտում էին ոչ միայն գցել նրա վարկը, այլև վիրացնել «ի միջոց»։ Այդ նպատակի համար նրանք օգտագործում էին ինչպես զրպարտության փորձված միջոցը, նույնպես և տեղական կառավարական օրգաններին ու ազդեցիկ մարդկանց։ Ամենայն հայոց կաթողիկոսը 1860 թվի նոյեմբերի 26-ին հատուկ կոնդակով զգուշացնում է «Հյուսիսափայլի» հրատարակչին, որ նա չտպագրի եկեղեցու և կրոնի դեմ ուղղված հոդվածներ, բայց, ինչպես երևում է Կովկասի փոխարքայի ընդհանուր գործերի դեպարտամենտի 1861 թ. օգոստոսի 10-ի № 515 գրությունից, Ս. Նազարյանը 1860 թվի դեկտեմբերի 21-ին կաթողիկոսին դրած իր նամակի մեջ իրեն որևէ չափով հանցապարտ չի զգում և հայտնում է, որ հետագայում նույնպես պետք է հրատարակի իր հանդեսը տպագրելով նույն ոգով ու նույն ոճով գրված հոդվածներ։ Այդ պատասխանը քննության է առնում էջմիածնի սինոդը և գտնում է, որ ոչ միայն Նազարյանի հանդեսը, այլև նրա հրատարակած «Վարդապետարան կրոնի» աշխատությունը (էջ 18, 40, 45, 48, 53, 55, 183 և 184) պարունակում են այնպիսի արտահայտություններ, որոնք ուղղված են հայկական եկեղեցու ուսմունքի դեմ, որի համար պահանջում է ընդհատել հանդեսի հրատարակությունը և առանց էջմիածնի գիտությանը թույլ չտալ տպագրելու կրոնական հարցերին վերաբերող գրքեր։

Էջմիածնի բողոքի առթիվ 1861 թ. սեպտեմբերի 15-ին Ստ. Նազարյանը գրում է մի բացատրական, որով հայտնում է, որ «Հյուսիսափայլը» իր հրատարակության առաջին իսկ օրվանից ծառայել է այն նպատակին, որ մոտեցնի հայերին Ռուսաստանի ժամանակակից քաղաքակրթությանը և մտավոր զարգացմանը, դնի նրանց ռուսական լուսավորական մտքի շրջանակների մեջ և օգնի նրանց՝ հասկանալու հասարակական կյանքի հարցերը։[1] Զարգացնելով իր մտքերը՝ նա գրում էր, որ «Հյուսիսափայլը» կհակասեր ինքն իրեն. եթե ռուսական կառավարության դեմ ուղղված որևէ քայլ կատարեր։ Իսկ ինչ վերաբերում է էջմիածնի կողմից իր անձնավորության դեմ հարուցած մեղադրանքներին, նա այդ բոլորը իր նկատմամբ ոմանց ունեցած անբարյացակամ վերաբերմունքի և մոտեցման հետևանք է համարում։ Այնուհետև նա մանրամասն պատասխանում է էջմիածնի սինոդի այն առարկություններին, որոնք արված էին ինչպես իր գրքի, նույնպես և «Հյուսիսափայլի» մասին, նրանց եզրակացությունների առիթը համարելով Գ. Զերքեղյանի նրա հասցեին արած զրպարտությունները։

Գրաքննության գլխավոր վարչությունը (Главное управление цен-

[1] ЦГИАЛ, ф. 733, опись 157, Ед. Хр. 111, стр. 5.

зуры) 1861 թվի հոկտեմբերի 21-ի № 1600 գրությամբ հայտնում է կովկասյան կոմիտեի անդամ Բուտկովին (члену Кавказского Комитета управляющему делами оного), որ «Հյուսիսափայլի» 1860 թվի 10-րդ գրքի մեջ (312 և 313 էջեր) հայ հոգևորականության հասցեին թույլ են տրված խիստ և անցանկալի արտահայտություններ, բայց դրանք չեն կարող հանդեսը փակելու հիմք հանդիսանալ. այդ պատճառով վարչությունը բավարարում է գրաքննիչին և Նազարյանին այդ մասին զգուշացնելով և նրանց կարգադրելով, որ այնուհետև այդպիսի անթույլատրելի ոճով չխոսեն հայ հոգևորականության ու նրա ներկայացուցիչների մասին։

Այդ պատասխանը սակայն չի գոհացնում էջմիածնին։ Հայ հոգևորականությունը նոր միջոցներ ու նոր փաստեր է որոնում Նազարյանին լռեցնելու։ Այդ նկատառումով խիստ քննության է ենթարկում Նազարյանի բոլոր աշխատությունները, ինչպես նաև «Հյուսիսափայլում» տպված հոդվածները և մի շարք մեղադրանքներ հարուցելով Նազարյանի դեմ՝ նորից է հարց հարուցվում նրա հանդեսը փակելու համար։

Որոնք էին նրա դեմ հարուցված մեղադրանքները։

1. Մեղադրում էին Նազարյանին այն բանի համար, որ նա իր գրքում («Վարդապետարան կրոնի», էջ 23) ասել է, թե աստվածը չի կարող մտածել որևէ բանի մասին։

2. Նազարյանը ասել է, որ իբր թե քրիստոսը նախքան ծնվելը չի իմացել մարդկության թշվառությունները։

3. Նազարյանի խոսքերից (նույն գրքի 45 էջում) եզրակացնում են, թե նա չի ընդունում, որ Հիսուս-քրիստոսը եղել է աստված։

4. Նազարյանին համարում են լյութերական, որը իբր թե քրիստոնեական վարդապետությանը դեմ է գործել։

5. Խախտում է քրիստոնեական օրենքով սահմանված ամուսնական կարգը։

6. Որ նա Լյութերի կրոնը համարում է քրիստոնեական ուսմունք։

7. Զափից դուրս գայրացնում է էջմիածնի հոգևորականներին Նազարյանի այն արտահայտությունը, որի մեջ նա ասում է, թե ինքը ողջամիտ քրիստոնյա է, որի հավատը այն է, ինչ որ ուսուցանում է Հիսուս-քրիստոսի վարդապետությունը. սրա մեջ նրանք տեսնում են լյութերականություն և հայհոյանք հայ-լուսավորչական եկեղեցու հասցեին։

8. Նազարյանը իբր թե ավետարանական վարդապետություն ասելով հասկանում է լյութերականություն։

9. Նազարյանը Լյութերի ազդեցության տակ պահանջում է հայկական եկեղեցու բարենորոգությունը հիմքից, որպիսի ցանկություն իբր թե անհամատեղելի է քրիստոնեական վարդապետության սկզբունքների հետ։

10. Նազարյանը խիստ կերպով՝ հարձակվում է քրիստոնեական վարդապետության վրա, գովում է լյութերականությունը և անվանարկում է հայ-լուսավորչական կրոնը, որի անունով միայն իբր թե հայությունը կարողացել է պահել իր միասնությունն ու գոյությունը։ Նա անվանարկում է նաև լուսավորչական եկեղեցու ներկայացուցիչներին և արհամարհում եկեղեցու օրենքները։

«Նշված մեղադրանքները» և շատ այլ հանգամանքներ նկատի ունե-

նալով, էջմիածնի սինոդը եզրակացնում է, որ Նազարյանը ֆասակար գործունեություն է տարածում և վտանգավոր անձնավորություն է։[1]

Նազարյանի գործերի և «Հյուսիսափայլի» մասին էջմիածնի ներկայացրած ամբաստանագիրը Կովկասի կոմիտեն 1863 թ. փետրվարի 8-ին № 182 գրությամբ ուղարկում է ներքին գործերի մինիստրին և խնդրում է անել համապատասխան կարգադրությունը. այդ գրության մեջ ասված է՝ թե գեներալ-ադյուտանտ կնյազ Օրբելիանին հայանում է, որ էջմիածնի հայ-լուսավորչական սինոդը խիստ քննության է ենթարկել Նազարյանի ինչպես առանձին հրատարակությունները, նույնպես և «Հյուսիսափայլը» և գտել է նրանց մեջ մի քանի հոդվածներ, որոնցում արտահայտված են այնպիսի մտքեր, որոնք ուղղված են քրիստոնեական կրոնի դեմ ընդհանրապես ե հայ-լուսավորչական կրոնի դեմ մասնավորապես։ Դրա հետ միասին կնյազ Օրբելիանին ներկայացրել է Նազարյանի երկերից էջմիածնի սինոդի հանած քաղվածքները՝ խնդրելով դրանք քննել ըստ գրաքննության կանոնադրության։[2]

Այդ գրությանը ներքին գործերի մինիստրությունը 1863 թ. հուլիսի 17-ի № 1348 գրությամբ պատասխանում է, որ Նազարյանի մասին էջմիածնի ուղարկած երկրորդ բողոքն էլ իրականությանը չի համապատասխանում և ինչպես երևում է նրա գործերից բերված քաղվածքներից, նրա արտահայտությունները վիրավորական չեն կարող լինել ոչ քրիստոնեական և ոչ էլ հայ-լուսավորչական հավատքի համար, և որ նրա դեմ հարուցված մեղադրանքները հիմնված են Նազարյանի անձի դեմ եղած անբարյացակամ վերաբերմունքի վրա։[3]

Այդ պատճառները նկատի ունենալով անհետևանք են թողնում էջմիածնի սինոդի բողոքները։

«Հյուսիսափայլի» դեմ հարուցված մեղադրանքները թեև ներկայացվում էին քրիստոնեական հավատքը պաշտպանելու պատրվակով, բայց իրականում այլ նպատակ էին հետապնդում։ Եթե Նազարյանի ելույթները որեէ վտանգ ներկայացնեին քրիստոնեական հավատքի համար, ռուսական ցենզուրան և հոգևորականությունը այնքան մեղմ չէին կարող վարվել նրա նկատմամբ։ Այնուամենայնիվ «Հյուսիսափայլի» հրատարակումով Նազարյանը թուլացնում էր հայ կուլտուրայի և հայոց լեզվի զարգացման վրա հայ հոգևորականության թողած ազդեցությունը։ Այդ բանը շատ լավ զգում էին հայ հոգևորականները և դրա մեջ տեսնում էին իրենց ազդեցության թուլացումը և եկամտի աղբյուրի կրճատումը, որի համար ավելի էին մտահոգված։ Հայ հոգևորականությանը ինչպես նաև հայկական հետադեմ ինտելիգենցիային անհանգստացնում էր «Հյուսիսափայլի» ուղղությունը, որովհետև նա հայ ժողովրդի կյանքի մեջ աշխուժություն էր մտցնում, օժանդակում էր ռուսական առաջավոր գաղափարների տարածմանը հայության մեջ և խթանում հայ ինտելիգենցիայի զարգացմանը։

Որ հանդեսի այդ կողմի վրա ուշադրություն է դարձրել նաև Նազարյանը։ Նա գրաքննության կոմիտեին ուղարկած իր բացատրության մեջ

[1] ЦГИАЛ, фонд 733. опись 157, Ед. Хр. 111, գործի 35—39 թերթերը։
[2] Նույնը, էջ 40։
[3] Նույն տեղում, էջ 41։

հենց այդ հանգամանքի վրա էլ ծանրանում է. նա ասում է, թե նորը առանց երկարատև ե կատաղի պայքարի չի կարող հաղթանակել. նորի և հնի պայքարը այժմ տեղի է ունենում նաև հայ ժողովրդի կյանքում ե «Հյուսիսափայլը», որպես ժամանակակից գաղափարների ու ժամանակակից հայացքների արտահայտիչ չէր կարող իր վրա չընդունել հնի երկրպագուների հարվածները։[1]

Հայ հոգևորականության կամայական գործողությունները Նաղարյանը խստորեն դատապարտում է. նա գանում է, որ հայ հոգևորականությունը ասիական ճահճացած հետադիմության արտահայտությունն է ե ի վերջո խստորեն պետք է պատժվի իր անհանդուրժելի քայլերի ու գործողությունների համար։ «Հյուսիսափայլը», շարունակում է Նաղարյանը, որպես նոր գաղափարների դրոշակակիր, չի կարող չնկատել հայ հասարակական կյանքի վերքերը և չառաջարկել դրանք բուժելու միջոցներ. այդ ուղղությունը պետք էր իմ դեմ հաներ ռեակցիայի ներկայացուցիչներին, որոնց մեջ պակաս կշիռ չի ունեցել նաև հայ հոգևորականությունը, որը և, գաղտնի և՛ հայտնի միշտ հետապնդել է «Հյուսիսափայլին», իսկ այժմ ստանձնել է վերջին պաշտոնը դառնալ դենք մասնավոր մարդկանց ձեռքին իմ դեմ պայքարելու համար։[2]

Ս. Նաղարյանը հավատացած էր, որ ինքը արդարացի է և հոգևորականությունը չի կարող ջնասել իրեն. բայց նա սխալվեց։ Նա չէր՝ ըմբռնում, որ ցարական իշխանությունը չէր կարող հաշվի չառնել հոգևորականության բողոքները և այն նյութերը, որոնք պատկանում էին Նալբանդյանի գրչին և տպվում էին «Հյուսիսափայլում»։ Հայ հոգևորականության հետևողական բողոքները և հետապնդումները, ինչպես կիմանանք բերված վավերագրերից, հասցնում են «Հյուսիսափայլի» արգելմանը։

Նաղարյանը, սակայն, չի հաշտվում այդ մտքի հետ և ուզում է շարունակել «Հյուսիսափայլի» հրատարակությունը, այս անգամ արդեն այլ անունով։ Այդ մասին նա 1868 թ. հունիսի 4-ին դիմում է լուսավորության մինիստրությանը և խնդրում է իրեն թույլ տալ հրատարակելու „Светоч Армении" ամսաթերթը. իր դիմումի մեջ նա գրում էր, որ կրթությունը ամեն օր ավելի ու ավելի ընդարձակում է իր սահմանները, հաղթականորեն թափանցում է հասարակության բոլոր շերտերի մեջ, գիտական ուսումնասիրությունները դառնում են յուրաքանչյուր քչից շատ գրագետ մարդու սեփականությունը. սակայն այդ բոլորը դեռևս չեն ներթափանցել ռուսական տիրապետության տակ անցած ժողովուրդների խորքը, և անհայտ են մնում նրանց շատ նորություններ, որոնց հենց նրանք ծանոթանալով ավելի սերտ կկապվեն ռուսական պետությանը և կաշխատեն հայրենիքի բարօրության համար։[3]

Ամսաթերթ հրատարակելու իր նախաձեռնությունը պատճառաբանելուց հետո Նաղարյանը հակիրճ շարադրում է այդ թերթի ծրագիրը, որը տրոհում է երեք բաժինների. առաջին բաժնում նրա կարծիքով պետք է գեղեցկորեն պատմական, աշխարհագրական և վիճակագրական հոդվածներ ու տեղեկություններ՝ հայերին Ռուսաստանի քաղաքական զարգացմանը ծա-

[1] ЦГИАЛ, ф. 772, оп. 7, Ер. Хр, 152129, стр. 23.
[2] Նույն տեղում, էջ 24։
[3] ЦГИАЛ, ф. 776, оп. 4, Ер. Хр. 156, стр. 2 (տես հավելված 2).

նոթացնելու նպատակով. երկրորդ բաժնում՝ պետք է տրվեին տեղեկություններ Ռուսաստանում կամ ռուսական տիրապետության տակ ապրող հայերի նյութական, հոգեոր և կրոնական վիճակի մասին, հին հայերի կրթության և գրագիտության պատմությունը, ժամանակակից հայերի հոգեոր-բարոյական պահանջների նկարագրությունը. երրորդ բաժինը պետք է ընդգրկեր մանկավարժության պատմությունը, վիպակներ և և պատմվածքներ ռուսական և եվրոպական կյանքից։[1]

Ինչպես երևում է Նազարյանի ծրագրից, այս ամսաթերթը ոչնչով չպետք է տարբերվեր «Հյուսիսափայլից», նա իր առաջ դրել էր բոլոր այն հարցերը, որոնք իր ժամանակին արծարծել էր «Հյուսիսափայլը»։

Նազարյանի այս պահանջը սակայն անհետևանք է թողնվում. ցարական կառավարությունը, թեև ուզղակի մեղադրանքներ չէր կարող հարուցել Նազարյանի դեմ, բայց և այնպես կասկածում էր նրա վարքագծի վրա, և նրա աշխատանքը հավարում էր աննպատակահարմար, պետության շահերին անհարիր։ Նազարյանի անունն էլ կապվում էր Նալբանդյանի անվան հետ, և ընդունվում էր, որ Նազարյանը նույնպես պետության սկզբունքներին հակառակ ուղղության տոն է տվել իր ամսաթերթում։ Երրորդ բաժնի 1868 թվկ հուլիսի 29-ի № 1017 գրության մեջ ասված է, որ Լազարյան ինստիտուտի դոկտոր Ստեփան Նազարյանը ներկայացնում է այնպիսի անձնավորություն, որին չի կարելի թույլ տալ որևէ հանդեսի կամ թերթի հրատարակություն։[2]

Մոսկվայի գեներալ-գուբերնատորի վարչության 1868 թվի օգոստոսի 19-ի № 278 գրության մեջ, որն ուղղված է մամուլի գործերի գլխավոր վարչությանը, ավելի մանրամասն հիմնավորմամբ տրված է Նազարյանի դիմումը մերժելու բացատրությունը. այդ գրության մեջ ասված է, որ Մոսկվայի օբերպոլիցմեյստերի և տեղական ժանդարմերիայի վարչության արված տեղեկությունների համաձայն Նազարյանը եղել է «Հյուսիսափայլի» հրատարակիչը։ Այդ ամսաթերթը հայոց պատրիարք Մաթեոսի միջնորդությամբ Ս. Պետերբուրգի գրաքննության վարչությունը փակում է, նրա հակակրոնական ուղղության և թերթում հակապետական, Հայաստանի սեպարատիզմի իդեաներին առն տվող հոդվածներ տպագրելու համար։ Այդ գրության մեջ նշված է նաև այն մասին, որ Նազարյանի այս հրատարակությունը չի թույլատրվում, որովհետև Նազարյանը իբր թե ձգտում է ծանոթացնել հայերին Ռուսաստանի քաղաքական զարգացմանը, որպիսի նախաձեռնում չի խրախուսվում և ցանկալի լինել չի կարող պետության համար։[3]

1868 թ. օգոստոսի 27-ին № 2025 գրությամբ հայտնվում է Նազարյանին, որ իր դիմումը թողնված է անհետևանք։ Այդ պատասխանը ըստ երևույթին շատ է ժտահոգում Նազարյանին և նա 1868թ. հոկտեմբերի 11-ին վերստին ուղարկում է մի գիմում, ոակայն այդ անգամ արդեն ոչ թե ամսաթերթ հրատարակելու. այլ իր շուրջը ստեղծված տրամադրությունները ցրելու նկատառումով։ Այդ դիմումի մեջ նա չի կարո-

[1] Նույն տեղում, էջ 3 (սես հավելված 3)։
[2] Նույն տեղում, թերթ 11 (սես հավելված 6)։
[3] Նույն տեղում, թերթ 12—13 (սես հավելված 6)։

դանում թաքցնել իր վրդովմունքը ու ճիշտ կերպով նշում է, որ այդ բոլորը բխում է փոքր ժողովուրդների նկատմամբ ունեցած անբարհնպաստ վերաբերմունքից։ Այդ դիմումի մեջ նա ասում է, որ այդ մերժումը իրեն բերում է միանդամայն անցանկալի եզրակացությունների. այսինքն՝ կամ իր նկատմամբ եղած անվստահության կամ ամենանվաղագույն դեպքում այդպիսի ամսաթերթի անհրաժեշտության բացասմանը։ Նա այդ նամակի մեջ գրում է, թե մամուլի գործերի գլխավոր վարչության գրասենյակը հայտնել է, որ «Հայաստանի ջահ» անունով ամսաթերթ հրատարակելու համար իր արած խնդիրքը մերժված է, այդպիսի անսպասելի մերժումը, բնականաբար, բերում է ինձ համար միանգամայն անցանկալի երկու եզրակացությունների. այսինքն՝ կամ իմ նկատմամբ եղած անվստահության, կամ ենթադրվող հրատարակությունը անօգտավետ համարելու ենթադրությունների։ Դիմելով առաջին հարցին,—շարունակում է նա,—ինձ իրավունք եմ տալիս ձեր ուշադրությունը դարձնել հետեյալ փաստերին. համալսարանական կրթությունս ավարտելուց հետո, ավելի քան 26 տարի լինելով պետական ծառայության մեջ՝ ես չեմ ենթարկվել որևէ նկատողության, այլ ընդհակառակը, խրախուսվել եմ զանազան պարգևներով։ Ինչ վերաբերում է իմ համոզմունքներին, ես կարող եմ համարձակորեն հենվել իմ մոտիկ զեկավարների, շատ պատվավոր անձանց կարծիքների վրա։ Իմ գործունեության ընթացքում կարող եմ ցույց տալ «Հյուսիսափայլի» էջերը, որոնք որևէ կասկած չեն առաջացնում իմ հավատարմության նկատմամբ և հիմք չեն տալիս ենթադրելու, որ ես թշնամաբար եմ տրամադրված գոյություն ունեցող կարգերի դեմ։ Բայց իմ պատիվն ու խիղճը պարտադրում են ինձ խոստովանել, որ հիշված ամսաթերթում տպված հոդվածներում հաճախ ես պայքարել եմ տգիտության դեմ, կռվել մեր եկեղեցու բարեկարգության համար։ Այդ բոլորը առիթ է տվել որոշ մարդկանց վատ տրամադրվելու իմ դեմ և զբաղարտելու ինձ։

Երկրորդ ենթադրությունը, որը վերաբերում է հայերեն ամսաթերթի անօգտավետությանը, իմ կարծիքով նեղվայացնում է այնպիսի անհամարություններ, որոնք կարող են վիրավորել Ռուսաստանում ապրող հայերի զգացմունքները։ Ռուսաստանի մոտ մեկ միլիոն հայերի համար,—շարունակում է նա,—այժմ հրատարակվում է միայն մի հանդես և մի թերթ և այն էլ այն ժամանակ, երբ Ռուսաստանի սահմաններից դուրս ավելի քան 15 անուն հանդես և թերթ են հրատարակվում հայերեն լեզվով։ Հայ ժողովրդի համար լեզվի հարցը կյանքի հարց է. մեր կառավարությունը ցանկանում է կտրել հայ ժողովրդի այդ վերջին զարկերակը, այդ, իմ կարծիքով, հումանիստական սկզբունքների հետ անհամատեղելի է։[1]

Նաղարյանի նամակը հետաքրքրական է մի շարք նկատառումներով. առաջինը այն, որ նույնիսկ Նաղարյանը, որ ավելի քան 26 տարի պետական ծառայության մեջ է եղել Ռուսաստանում և վայելել է բարձր պաշտոնյաների համակրանքը, կասկածանքի տակ է առնվել։ Երկրորդ՝ այդ բանը զգացել է նաև Նաղարյանը և ցանկացել է պաշտպանվել, բայց դրանով իսկ ժատնել է իրեն և շարադրել է իր տեսակետները ռուսական պետության վարած քաղաքականության և փոքր ժողովուրդների զարգացման դեմ

[1] Նույն տեղում, էջ 15—16 (աես հավելված 6).

արհեստականորեն արգելքներ ստեղծելու մասին. Նաղարյանի այն դրժդոհությունը, որ Ռուսաստանի սահմաններից դուրս ավելի քան տասնևհինգ հայերեն թերթ և ամսաթերթ է լույս տեսնում, իսկ Ռուսաստանում միայն մի ժուռնալ և մի թերթ, ինքնըստինքյան խոսում է ցարական Ռուսաստանի ազգային քաղաքականության մասին։

Երրորդ՝ Նաղարյանը շատ լուրջ է համարում աշխարհարար լեզվի հարցը. նա հայ ժողովրդի զարդացման հիմնական միջոցը համարում է նրան հասկանալի լեզվով գրականություն տալը։ Այս միտքը փայփայել է Արովյանը, ապա Նալբանդյանն ու Նաղարյանը գործնականում ցույց տվին դրա կարևորությունը՝ «Հյուսիսափայլը» օգտագործելով որպես հզոր միջոց ոչ միայն առաջավոր գաղափարները հայ ժողովրդի մեջ տարածելու, այլև նոր հայերենը՝ աշխարհարարը մշակելու և ժողովրդին սիրելի դարձնելու համար։ «Հյուսիսափայլի» հրատարակումը դադարեցնելուց հետո Նաղարյանը ավելի խոր է զգում պարբերական հրատարակության անհրաժեշտությունը և պայքարում է նոր ամսաթերթի համար, որպեսզի, ինչպես ասում է նա իր նամակում, չհատվի հայ ժողովրդի զարկերակը և նա ապրի ու զարգանա ե հասնի քաղաքականապես ավելի հասունացած ժողովուրդներին։

Նաղարյանի այս մտքերն ու ցանկությունները, ինչպես նաև «Հյուսիսափայլի» ժամանակաշրջանում նրա վարած քաղաքականությունը և Նալբանդյանի նման բոցաշունչ մարտնչողի հովանավորելը նրան ավելի են մոտեցնում 60-ական թվականների լուսավորիչներին, ավելի ընդգծում նրա կերպարը, դնելով նրան հայ ժողովրդի լեզվի ու կուլտուրայի զարգացման համար պայքարող մարտիկների շարքի մեջ։

Հ Ա Վ Ե Լ Վ Ա Ծ

I. Милостивейший государь!

Предполагаемое периодическое издание будет состоять из следующих отделов:

1. Статьи по части Общего Землеведения, куда войдут география и статистика России с большей подробностью, описание земель, характеристика их естественной физиономии и оттуда вытекающие последствия для народной цивилизации. Сведения об открытиях географических и любопытные отрывки из описания путешествий по пяти частям света.

2. Статьи по части Всеобщей Истории, кула войдут История Российского Государства в большей подробности. В этом отделе будут сообщаться достопримечательные события истории человечества, биографические характеристики знаменитых лиц исторических в особенности героев Отечественной Истории, ревнителей русской славы и русского имени.

3. Статьи по части естествоведения, а именно: о силах, действующих в телесном мире и о приложении их к житейскому быту.

О различных явлениях физикальных, о популярной Астрономии, Химии, Минералогии, Зоологии и Физиологии. Сюда же войдут рассуждения о жизни растительной, о достопримечательных растениях в различных странах света, об их разведении и влиянии на состояние общественное, далее описание последних для жизни изобретений и открытий в области искусства и природы.

4. Статьи Нравственно-Эстетические и изящно-литературные. Сюда войдут лучшие мысли и лучшие чувства в изящных формах как поэтических, так и прозаических, отборочные отрывки из древней Гайканской, русской и европейской литератур. Сюда же поместятся критические разборы изданных на армянском как древнем, так и новом языке, новых книг с избежанием всякого полемического тона, с добросовестною оценкою каждого труда в области умственной.

С глубоким уважением имею честь быть Вашего Высокопревосходительства покорнейшим слугою Степан Назарянц, профессор Восточных языков при Лазаревском Институте.

2. Ваше высокопревосходительство, милостивейший государь!

Образование с каждым днем все более раздвигает пределы своей территории и победоносно проникает во все слои общества. Результаты многочисленных исследований по различным отраслям знания в безконечно-разнообразных видах оплодотворяются для обыденной жизни и обращаются в достояние каждого сколько нибудь образованного человека в народе. В виду этого повсеместно замечаемого, отрадного стремления науки выходить из своего замкнутого исключительного положения и сделаться популярной—стремления, в круг которого с торжеством вступило и наше дорогое отечество—находятся однакож не малые пространства обширной Империи, а именно, на отдаленных точках ее периферии, лишь скудно осязаемые живительными лучами центрального солнца. Еще многие иноплеменные народы, осеняемые могучими крыльями русского орла, прозябает там, чуждые благодати просвещения, из'ятые глубоким, духовным сном. Не говоря уже о народах, исповедывающих ислам, которые, из религиозного фанатизма, сами себя исключают из соучастия в благодеяниях христианской науки и образования—одно из значительнейших христианских племен на русском востоке—Армяне призванные к делу прогресса, к усвоению плодов современного просвещения в России, представляют нам в массе явление, также мало уменьшительное. Имея счастье быть политически—связанными с одним из посвященейших государств Европы, русские армяне, тем не менее, изолированные в своем дальнем азиатском мире, остаются совершенно в стороне от той светлой арены исторической жизни, на которой в настоящую пору с такой славой подвизаются силы русского ума в европейских средоточиях нашего Отечества.

В видах духовно-нравственного сближения армян с Россиею и вместе создания более прочных связей любви и привязанности к престолу и отечеству, я намерен основать на народном языке армян литературный орган, как единственное средство для передачи плодов современного просвещения и образованности далеко раскиданным по обширной империи обществам армянского народа. Журнал этот, по внутреннему своему назначению будет носить название: „Светоч Армении", с изображением его на горной возвышенности Арарата, осененным распростертыми крыльями русского орла.

С глубоким уважением имею честь быть Вашего Высокопревосходительства покорнейшим слугою Степан Назарянц, профессор Восточных языков при Лазаревском Институте.

3. Программа журнала под названием „Светоч Армении".

Отдел 1. Статьи исторические, географические и статистические для ознакомления русских армян с политическим развитием России, с природными условиями русской земли и состоянием внутренней ее цивилизации,—характеристики различных эпох всеобщей истории.—Жизнеописание великих мужей—деятелей всемирной истории и благотворителей человечества. Статьи по различным отраслям естествоведения о новых открытиях и изобретениях в области природы и искусства. Приложение результатов современного естествознания к обыденной жизни, физическому воспитанию человека, сохранению его здоровья в нормальном состоянии. Описание сцен природы и любопытные путешествия вокруг света. Картины нравов и обычаев различных народов земного шара.

Отдел 2-ой. Современный материальный, духовный и религиозный быт армян в России и других государствах. Судьба армянского племени в прошедшие столетия. История древне-гайканского просвещения и литературы под влиянием христианства, настоящее духовно-нравственные потребности Армян, как народа, призванного к участии в деле европейской цивилизации и науки.

Отдел 3-ий. История педагогики. Начало современной педагогики у европейских народов. Мысли относительно дела воспитания, высказанные в различных сочинениях европейских писателей. Повести и рассказы. Литература русская, немецкая, французская и английская. Критические статьи корреспонденции.

4. В Главное Управление по делам печати.

Вследствие отношения Главного Управления по делам печати от 12 текущего июля за № 1639,—имею честь уведомить, что упоминаемый в том отношении профессор восточных языков при Лазаревском Институте доктор Степан Назарянц представляется такой

личностью, которой не может быть дозволено издание какого бы то ни было журнала или газеты.

Управляющий Отделением, Свиты Его Величества генерал-майор -- (Подпись)

5.

Возвращая присланную к Московскому генерал-губернатору при отношении от 12 минувшего июля за № 1646 копию с программы журнала, предполагаемого к изданию профессором восточных языков при Лазаревском Институте Назарянцом, имею честь уведомить Ваше Превосходительство, что, по доставленным Московским Обер-Полицмейстером и Начальником здешнего Губернского жандармского управления сведениям, Назарянц был уже издателем армянского журнала „Северное Сияние", но, вследствие ходатайства армянского патриарха Матвея, по распоряжению С. Петербургского Цензурного Комитета, издание этого журнала запрещено за антирелигиозное направление и посеянный им разлад между армянским обществом и церковью. Кроме того Назарянц перевел лютеранский катехизис на армянский язык и напечатав его распространял между армянами для введения в армянскую церковь протестантизма. Одним из сотрудников его при издании помянутого журнала был Нахичеванский житель Налбандов, арестованный в 1862 г. по распоряжению III отделения Собственной Его Величества Канцелярии за проводимые им идеи о сепаратизме Армении.

Поэтому, хотя в настоящее время Назарянц не замечен в предосудительных поступках, но имея в виду вышеизложенные сведения и усматривая из программы журнала предполагаемого им к изданию, что он намерен знакомить армян с политическим развитием России, объяснять современный их быт и судьбы армянского племени в прошлом, нельзя быть уверенным, что с подобного программного журнала, в случае издания его без цензуры, не будет проводником вредных идей.

За Московского Генерал-Губернатора, Губернатор (Подпись)

6. *Ваше Высокопревосходительство, Милостивейший Государь!*

Канцелярия Главного Управления по Делам печати, от 27-го минувшего августа, за № 2025 м, уведомила меня, что на удовлетворение моей просьбы о дозволении мне издавать журнал, под названием „Светоч Армении", начальственного разрешения не последовало.

В виду такого неожиданного отказа мне со стороны Начальства, я прихожу естественным образом ко двум весьма грустным для меня заключениям, а именно: о предположении моей неблагонадежности и, о признании предполагаемого издания, по меньшей мере, безполезным.

Обращаясь к первому вопросу, считаю себя вправе представить на внимание Вашего Высокопревосходительства следующие факты: С самого окончания моего университетского образования в Дерпте, с лишним уже 26 лет, состоя в государственной службе, я не только не подвергался каким либо замечаниям, но, неоднократно, был поощряем лестным для меня Всемилостивейшими наградами. Что касается моего образа мыслей и жизни—я могу смело ссылаться на мнение о том ближайшего моего Начальства, почетных лиц, достоверно меня знающих, Господина попечителя Лазаревского Института, Христофора Якимовича Лазарева и Товарища Министра Народного Просвещения, Николая Давидовича Делянова; наконец, на мнение того общества, которое пользовалось моей многолетней деятельностью на поприще армянской литературы и журналистики. Среди этой деятельности, с уверенностью могу указать на страницы прекращеннаго мною армянского журнала „Северное Сияние", не представляющия ни малейшего повода к сомнению в верноподданических моих чувствах, или ко предположению враждебности к существующим порядкам. Но и честь и совесть обязывают меня признаться, что в статьях, помещенных в означенном журнале, нередко я боролся с невежеством, ратовал за благоустройство нашей церкви, побуждая к распространению образования между духовенством; и эти вопросы насущной потребности, развиваемые мною на почве строгого христианского благочестия и любви к ближнему, к сожалению также нередко были оспариваемы людьми, которым уровень образования не позволял понимать проводимые мною мысли и располагал их к недостойной клевете.

Второе предположение, касающееся безполезности армянского журнала, по крайнему моему разумению, представляет такия неудобства, которыя могут оскорбить чувства преданности армянского населения России—того племени, которого единственная отрада заключается в сохранении своего языка, этого тысячелетнего достояния, через потоки крови их века во века перешедшего к потомству. Скажу более: предполагаемый к изданию журнал находится в полном соответствии с интересами России, которые, очевидно, должны состоять в духовно-нравственном сближении с ней далеко раскиданного по обширной Империи армянского населения; а также сближение возможно только при содействии литературного органа, говорящего с массой народа языком, для нея доступным, в формах, приноровленных ко степени ея развития и ко скудному образованию читающей публики вообще. Во всей России, в настоящее время, для населения Армян около миллиона, издается на армянском языке один журнал и одна газета, тогда-как вне пределов России, периодических изданий на том же языке считается более пятнадцати и, и одном только Константинополе, более десяти.

Самое свойство отказа мне издавать журнал, быть может, основанного вовсе не на государственных видах, а на какой нибудь част-

ной причине, в роде упомянутого выше, как в нашем отечестве, так и, в особенности, вне пределов оного, может быть истолковано в невыгодную сторону и дать превратное понятие о той свободе, которая составляет славу настоящего царствования.—Смею уверить Ваше Высокопревосходительство, что для армянского народа вопрос об языке есть вопрос жизни, и чтобы эту последнюю его артерию пожелало разорвать наше правительство—это не совместно с моим образом мыслей о гумманных началах, руководящих его действиями.

Под влиянием такого убеждения принял я смелость представить на уважение Вашего Высокопревосходительства мое объявление, надеясь, что благосклонным вниманием сообразив изложенныя мною обстоятельства, найдете возможным удовлетворительно разрешить мою просьбу.

С глубоким уважением имею честь быть Вашего Высокопревосходительства покорнейшим слугою Степан Назарянц, профессор Восточных языков при Лазаревском Институте.

«11» октября 1868 года Москва